

Ausbreitung auf das Gesamtnominale erblicken. Eine Stütze erhält diese Annahme durch die von Meillet vorgebrachte syntaktische Eigenschaft, E. IX, *meo ark'aitik', ik en, bazum awurk'* usw. Pedersen, A. Nspr. 406, ist nicht überzeugendes. Die direkten Zeugen für den formantischen Velarreichtum müßten, wenn athematisch, verloren gehen, sind aber, wie wir rückblickend sagen können, im Plural attestiert.

Die Ausdehnung auf das Verbum ist nach Feststellung der nominalen Sachlage wahrscheinlich, dass aber keine Ansätze vorhanden gewesen wären, an welche die nominale Uebertragung anknapfte, ist durch nichts erwiesen.

Dr. Karl Treimer.

անուանց ամբողջական վրայ: Այս կարծիքը կուտան մի կը տառնայ Գեղեթի յառաջ բերած համապարհական մէկ յատկութեամբ (Հմտ. Գեղ. էջ Թ.) Կէ պրոպիւս ի նշ: Բազմա՝ ապրտ նշ: Պեղեթընի (Հայ. եւ Պր. էջ 468) ըսածն աւելի համոզիչ չէ: Չեւակերտ քմաւորապատկանաց անուանական ուղղակի վիճակը, երբ անարմատ էին, պէտք էր կորստէին. բայց՝ ինչպէս կրնա՞ր ըսել անգրագրած հայեցողութեամբ, կը յայտնագործուին յոգնակոյն մէջ:

Անուանականի որոշումներն որոշուելէն ետքը՝ հասանական է բնոր տարածուիլը նաեւ բոյի վրայ. բայց այնչէր կ'ապացուցանի այն կետք թէ չկային իրզք բողբոջներ ալ, զորոնք կուտան առաւ իրեն անուանական այն փոխանցումը:

Կ. ՏՐԱՍՏՈՐ

Թրգմ. ԵՂ. ԻԳՆԱՏԻՈՍ ԱԳՆԱՍ

## ԱՅԳՅԵՐԱԿԱՆ

### ՅԵՂԵՐԱՆԱԿԱՆ ՀԵՏԵՂՈՑՈՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԻԽԹԱՆԻՐՈՑ ՄԵՋ

Թերեւս աւելի հասկանալի պիտի լինէր, եթէ փոխանակ Բիւթանիոյ ըսէի Իսթիտի Սանճաքին, մէջ: Բիւթանիա դասական հնութեան մէջ այն փոքրիկ աշխարհն էր, որուն հիւսիսային բաժինը կը կազմէր մի եռանկիւն, ունենալով իրեն խորխոխ Իսթիտի ծովախորշին ծայրէն դէպ ի զհասաւ յառաջացող մի ուղիղ գիծ, իսկ իրեն գաղափ Գանձորի տարական տախտիկը: Հարաւամասը կ'ընդգրկէր այսօրուան Պրուսայի վիլայէթին մի կարեւոր կտորը իր մէջ ունենալով Ուլմանի լեռնաշղթան. Յուլիոս Վեսար հիւրասիրուեցաւ Նիքոմիդիոսէ, Նիկոմիդիոյ հիմնադրէն, որ կը տիրէր Բիւթանիոյ, Հաննիպալ, Հուստիսցիներէ յաղթուելէ յետոյ, ապաստանեցաւ ի Բիւթանիա եւ այս երկու պատմական անձնաւորութեանց ժամանակաւորապէս կամ տեւական մնալը այս երկրի մէջ ապահովեց անոր պատմական անունը եւ կարեւորութիւնը: Մէն անգամ երբ այց կ'ընէին Փոքր-Ասիոյ այս կամ այն երկրամասերն, մտքին մէջ կ'արթննան բոլոր այն պատմական իրադարձութիւնները, որոնք կատարուեցան հոն անցելոյն մէջ եւ հրապարակ եւ շահեկանութեամբ կը պարարեն զայն: Անցելոյն եւ ներ-

կային բաղդատութիւնը, երբեմն հոն բնակող ժողովուրդներու ջրումը եւ անհետացումը, նորերու երեւումը պատմական եւ ցեղագրական տեսակէտէ հետաքրքրական հարցեր կը դնեն մեր առջեւ, որոնց ուսումնասիրութիւնը եւ վերլուծումը ապահովապէս նշոյնան կարեւոր են, որքան մարդկութեան համար անմիջական եւ գործնական շահեկանութիւն ունեցող մի որեւէ գիտական խնդրի հետազոտութիւնը:

Բիւթանիա այսօր մի հոծ հայ գիւղացի բնակչութիւն ունի, եկած հաստատուած վերջին դարերու մէջ թիւըը տիրապետութեան հաստատուածն ասոցին, աւելի կամ նուազ հաւատարմութեամբ պահած իւրենց բնակչութիւնը, բարքերն աւ սովորութիւնները, թէեւ լեզուն արդէն հզորապէս աղաւաղուած թիւրքերէնի ազդեցութեան տակ, այնպէս որ իւր խօսած հայերէնի գրեթէ <sup>3)</sup> չէ թիւրք բառերէ կազմուած է: Այս հայ գաղութին ներկայութիւնը Բիւթանիոյ մէջ պատճառ եղաւ որ, թէ մօտաւոր անցելոյն մէջ եւ թէ այս անգամ երթամ անցելոյն վրայ յառաջ վարել հայ ցեղագրութեան վերաբերեալ սկսած ուսումնասիրութիւն, որուն մասին արդէն առիթ ունեցայ մի աշխատութիւն կարգաւոր Վիեննայի կայսերական բժշկական կաճառին առջեւ:

Հիւանայի է տեսարանը Վեներէէն եւ Պոլսի 1800է մինչեւ 2000 մետր բարձրացող լեռնաշղթաներուն, որոնք կը կազմեն Ուլմանի

Հետ Բիթանիյ շնորհաբար հե. որոնցմե առաջինները կ'եղերին իսթոփի ծովախորշէն գէպի արեւելք ձգող ընդարձակ գաւառ, որուն մէջ են Գապանճաք լիճը եւ Ջաքարիա գետը: Եւ այս անտարանը կը մնայ շարունակ Բիթանի- նիս այցելողին տեսողութեան սահմաններուն մէջ, մասնաւորապէս երբ մարդ կանգ կ'առնու հայ գիւղերուն մէջ, որպիսիք են, Արմաշ, Մաշ, Մասքաւ, Տաղ-գիւղ, Էլմալը, Բընտըրըլ, Փէրիզըլ եւ ուրիշներ:

Իմ այս անգամնական պոյոյտ տեւեց տաս- ներկու օր (1—12 մարտ), եւ մնացի մի կամ աւելի օրեր յիշեալ գիւղերուն մէջ. ուշագրութիւնս նուիրելով մասնաւորապէս հայ տիպի ուսումնասիրութեան, որուն արդիւնքը կը խը- տացնեմ Հետեւեալ տողերուն մէջ:

Հաւաքածու եւ հայ ցեղի գանկին վրայ անսնուած առփակցած քունքով կ'որ ձեւը, Brachiocephalic, որ իւր տիպիք վիճակին մէջ կը ներկայանայ թուական յաճախագէպ կերպով (շուրջ 10%) փորրիկ դպրոցականներու վրայ, հայ գանկի աւելի տվորական եւ հոն սակայն Mesencephalic, որ առաջինէն անով կը զանա- գանի որ քունքը նուազ առփակ կամ միայն թիթեւօրէն ցցուած եւ գանկը արջն ու ձախէն աւելի սեղմ, աւելի նեղ կը ներկայանայ. Mesencephalic պէտք եւ առանց վարանման ըն- գունիկ հայ ցեղի գանկը բնորոշող իրեւ ամե- նէն ընդհանրացած ձեւը. իսկ Dotichocephalic, այսինքն արջն ու ձախէն սեղմուած, շնչուած քունքով բարձր գանկը, ինչպէս ան կը ներ- կայանայ Ափսոսանքաւեան եւ Կիւրիկեան ցեղերէ շատերու վրայ իւր առաւել կամ նուազ հա- րազատ կազմութեան մէջ, բաւական հազուա- գէպ եւ Հայերուն մէջ:

Տարակոյր չկայ թէ ընդհանուր կերպով մի որոշ առնչութիւն կայ մարդկային գանկի ձեւին եւ հասակին միջեւ: Նեղ եւ բարձր գլուխ- ները կը տեսնուին բարձր մարմններու վրայ, իսկ կլոր եւ միջին կլոր գլուխներ կրող մար- մնները առհասարակ միջահասակ եւ լայն կազմուածք ունին եւ, իրեւ Հետեւութիւնս այս մարդաբանական իրողութեան, հայ ցեղը կը ներկայանայ, իւր մեծամասնութեան մէջ, միջին եւ միջինէն միայն թիթեւօրէն բարձր հասակով, միջեւեւ իսկապէս բարձրահասակներ, ինչպէս անոնք ցեղը յատկանշելու աստիճան յաճա- իտեւորութեամբ մեզ կը հանգիստեմ բարձրա- ցանկ ժողովուրդներու մէջ, Հայերուն համար յաճախական երեւոյթ չեն կազմեր, կամ ուրիշ

խօսքով, միայն այն համեմատութեամբ մեր մէջ կը գտնուին, որով առ մեզ կը ներկայանայ բարձրագանկ անհաստեւորութիւնը:

Հայ ժողովուրդի մերթին, մազերուն եւ աչքերուն բնորոշող գոյնին նկատմամբ ֆիզիոսով ըսած ե թէ Հայերը 70% թուիս են, իսկ 30% գեղին, ի հարկէ թէ թուիս եւ թէ գեղին իրենց այլազան երանգաւորումներով. ֆիզիոսով այս խօսքը եւ միշտ հաստատուած գաղա իմ կատարած ուսումնասիրութեանցս ընթացքին: Միայն պէտք եւ աւելցնեմ թէ Հայութեան երե- տուն առ հարկիւր գեղին մասը լինանքականներու մէջ անհամեմատ աւելի յաճախագէպ ե քան դաշտաբնականներուն մէջ, որոնց համար կարելի ե ըսել թէ 90% համեմատութեամբ թիթաւորութիւնով են:

Այսպէս, օրինակի համար, Պարսիկական վեր Մանիշակ գիւղի Հայերը, որոնք Օրտուի բարձրաց ընկններէն են եւ իսկական լինուս. բնակներ, աչքի կը զարնեն թէ իրենք եւ թէ մանաւանդ իրենց երախաները, իրենց մազերուն արտասովոր գեղնութեամբ, միջի ճերմակու- թեամբ եւ աչքերու աւելի կամ պակաս գորշ կամ կապոյտ երանգով:

Յընտքըլը, ուր մօտ վեց ժամ անցնելով, Էլմալըն միայն մի ժամ, իսկ Սըմաշէ չորս ժամ հետու, մասնաւորապէս ան պատճառաւ ինձ հա- մար շահեկան էր, որ իւր հայ բնակիչները ամե- նամեծ մասամբ յունադաւան են եւ ծանօթ Հայ-հոռոմ յորջորջման տակ: Այս գիւղի մէջ ինձ առաջին անգամ առիթ ներկայացաւ Հայ-հոռոմները մարդաբանական անսակէտէ քննելու եւ ճշգրելու իրենց ցեղաբանական դիրքը հանդէպ Հայութեան. թէ՛ իմ կատարած ծանօթու- թեանցս ընթացքին գիւղին Հայ-հոռոմ քա- հաններուն հետ եւ թէ իրեւ բոլիշ տուած այցելութեանցս միջոցին Հայ-հոռոմներէ ոմանց ընտանեկան յարկին մէջ, ինչպէս նաեւ դուրը փողոցներուն մէջ ինձ հանգիստեմ բազմաթիւ այր ու կին անհատեւ առած տպաբաւորութիւնս այն եղաւ, թէ Հայ-հոռոմները, առանց բացա- ութութեան, հարազատ հայ տիպը կը ներկայաց- նեն, ի հարկէ իւր աւելի կամ պակաս շեշ- տուած գանաղանութեամբ: Սակայն ոչ թէ միայն իրենց ներկայացուցած տիպը, որ ամեն կասկածէ վեր ի յայտ կը բերէ իրենց ցեղակ- ցութիւնը եւ նշոյնութիւնը հայ ազգի հետ, այլ նաեւ իրենց ինքզին, որ անխոր թէ՛ տուն մէջ եւ թէ՛ դուրս հայրենէ է, թէեւ բաւական աղաւաղեալ, այլ նաեւ իրենց ընտանի բարբերը,

սովորութիւնը եւ նիստուկացը բոլորովն հայկական են: Միայն թէ մարդ ապշած կը մնայ, երբ առաջին անգամ մտնելով իրենց տներուն եւ իրենց ըստ ամենայնի հայեցի միջավայրին մէջ, ուր ոչ ինչ չկայ որ կարողանար որեւէ խնդիրի գոյութեան կասկածը արթնցնել իր եւ տնեցիներուն մինչեւ, յանկարծ կը տեսնէ սեւեկին պատէն կախուած հանգուցեալ Եօսֆիի կամ աւոր յաջորդ Եդրմանտ Պատրիարքին պատկերը: Նոյն ապշեցուցիչ տպաւորութիւնը կ'ունենայ մարդ, երբ հանդիպած գիւղացիներուն իրենց անունները հայերէն կը հարցնէ եւ կ'առնու անոնցմէ, օրինակի համար, հետեւեալ պատասխանները: Յիմարի, Եօրիկ, Սթավրի, Ասթաղիա, Մառիշա, Յեւթիսա եւայլն:

Իրենց տարօրինակութեամբը ոչ նուազ հետաքրքրական երեւոյթ մը կ'ընծայեն գիւղին դպրոցին մէջ կատարուած դասաւանդութիւնները, որոնց ներկայ գտնուեցայ  $\frac{1}{2}$  Ժամու շաբաթը, որոնց ներքին աղաք, մանչ թէ աղջիկ, ամենահարազատ հայեր իրենց ցեղային սովորով, ճիգեր կ'ընեն դուրսէն բերուած յոյն ուսուցիչներու ղեկավարութեամբ յունարէն քերականներու եւ ընթերցարաններու վրայ յունարէն կարդալ եւ խօսիլ սորվելու: Եւ գիւղիս Ժողովուրդը չի անդարդառնար թէ իւր զաւակներուն համար առնուաղն նշոյնքան կարեւոր էր հայերէնի ուսումը, իսկ այս երեւոյթին ականատեսը ակամայ կը ասորուի մասնեւոր, թէ հակաձեւական բան մը կայ այս ամէնուն մէջ:

Քրնքաբլը երկու թաղեր ունի, Լէվէնտ եւ Բարթաւր, որոնք իրարու կից են եւ որոնց բնակչութիւնը գուրաւ հայ-հոռոմ է. իսկ անոր երրորդ թաղին մէջ, որ քսան վայրկեան աւելի հեռուն վարը գրուած է եւ Վարի թաղ կ'առնանուի, կան Հայ-հոռոմ մեծամասնութեան քով նաեւ Հայ լատաւորականներ: Երկու համայնքներն ալ սիրով են իրարու հետ եւ խառն ամուսնութիւններ իրենց միջեւ բաւական յաճախդէպ:

Գր. Մ. ՎԱՆԷ



## ԶՅԱԿԱՆՈՒԹԵՆՆ ԸՆԿՈՒԲԸ

Կողմն գաւառի — մասնաւորապէս նորայն մասի, որի բնակիչները յայտնի են զօկ կոչուով — բազմազակ կեանքը իր ներքինով եւ արտաքինով յեղաշրջման, կերպարանափոխութեան փուլի մէջ է գտնուում այժմ: Կամաց-կամաց — բայց յամառօրէն — ընկնում, խորտակոււմ են այն ամէնը, ինչ որ երկրի տեղական-աշխարհագրական դիրքն ու պատմական պայմանները դարձնել են այստեղ:

Անդիմադրելի է այդ կերպարանափոխութեան յառաջնադարութիւնը: Այլ եւս անկարելի է զեպ անկում դիմող այդ շարժման առաջն առնուլ, որովհետեւ նա արդէն ստացել է մի տեսակ տարեքային բնաւորութիւն, որովհետեւ նա խութերից եւ խոլերից բոլորովն մաքրել է իր ծանապարհը եւ ընթանում է յաղթական, անարգել:

Ինչպէս յայտնի է, հին վասպուրականի այդ հռչակաւոր գաւառը — իր կարուած, առանձնացած դիրքի շնորհիւ — ստեղծել է իր բնակիչներին համար ոչ միայն ուրոյն սովորութիւններ, ուրոյն նիստ ու կաց եւ ազգագրական-ցեղային ուրոյն առանձնայատկութիւններ, այլ եւ մի զով, զուս տեղական լեզու: Մտեղծելուց յետոյ էլ նա, հարազատ մօր նման, իր գրկում դարձրեւ յառանձին խնամքով պահել, պահպանել է այդ ամէնը:

Սակայն այսօր կորչելու, խաղա ոյնչանալու վտանգի առջեւ է կանգնած ինչ որ զօկական է — զօկ լեզուն, զօկ սովորութիւնները, զօկ նիստ ու կացը:

Այսօր ամբողջ Զօկառանում է նախնի սովորութիւններից եւ կենցաղական երեւոյթներից շատ քիչ բան կը գտնէք — կամ աւելի ճիշտը՝ ոչինչ չէք գտնի — մաքուր, անաղարտ մնացած: Եղածներն էլ այնքան եղծուել, այնքան աղաւաղուել ու փոխուել են զանազան օտարական ազդեցութիւններից, որ նորանց մէջ նոր, եկամուտ տարրը բոլորովն կանել, ոչնչացրել է բնիկ սեղանկանը:

Զօկական բարբառն եւս այսօր ենթակայ է նոյն բախիւն: Նա, որ իրեն ծնող եւ սնուցանող գործօնների հովնուս ներքեւ մի քանի տասնեակ դարեր — եթէ չասենք՝ էլ աւելի — պաշտպանուել է դրսի ազդեցութիւններից եւ ապրել անդն, անազգեցիկ, սրբութեամբ

1 Այդպէս սովորաբար կոչոււմ են Գողմն գաւառի հետեւեւ գիւղերը՝ Վերին-Աղուլիս, Ներքին-Աղուլիս, Յընա, Յածակեւո, Բաղաբի, Դիտար եւ Հաւաթի: